

## Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2801 ամյակը

Երևանն այն քաղաքն է, որտեղ կարելի է ջուր խմել ցայտադրյուրից, վայելել արևահամ ամառն ու տեսնել աշխարհի ամենահին բերդերից մեկը՝ Էրեբունին:



Այս տարի լրանում է Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2801 ամյակը: Հայաստանի ազգային գրադարանը եւս մասնակցություն ունեցավ տոնական միջոցառումներին: «Էրեբունի-Երևանը նկարագարող ալբոմներում, գրքերում, պլակատներում եւ լուսանկարներում» խորագրով ցուցադրությամբ էր ներկայացել գրադարանի Արվեստի գրականության եւ ոչ գրքային հրատարակությունների բաժինը:

Ազգային ժողովը, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Գիտությունների ազգային ակադեմիայի շենքը, Հայաստանի ազգային գրադարանը, Փակ շուկան, Ազգային պատկերասրահը...թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահի ցուցափեղկերում ներկայացվեցին այս եւ այլ պատմական արժեք ներկայացնող հուշարձանների տարբեր տարիների լուսանկարներ, Երեւանի մասին գրքեր, պատկերագարող ալբոմներ: Յուրաքանչյուր նմուշի մասին պատմեց եւ ցուցադրությունը մանրամասն ներկայացրեց բաժնի աշխատակից Հասմիկ Առաքելյանը, որին հաջորդեց Արվեստի գրականության եւ ոչ գրքային հրատարակությունների բաժնի վարիչ Աննա Օսանյանի զեկույցը՝ «Էրեբունի, իսկ դարեր անց արդեն Երևան» թեմայով:

Աննա Օսանյանը ներկայացրեց Էրեբունի բերդի կառուցվածքային առանձնահատկություններն ու հիմնական կառույցները՝ ընդգծելով, որ մասնակից է եղել Էրեբունի բերդ-ամրոցի հնագիտական պեղումների աշխատանքներին:



«Առաջին իսկ տարում Արին բերդի հետախուզական պեղումների ժամանակ գտնվել է Արգիշտի I թագավորի շինարարական մի արձանագրություն, որն ինչպես պարզվեց վերծանումից, Էրեբունի քաղաք-ամրոցի կառուցման վավերագիրն էր»,- նշեց Աննա Օսանյանը՝ ավելացնելով, որ չնայած նրան, որ ներկայումս էլ շարունակվում են պեղման եւ ամրակայման աշխատանքներն,

այնուամենայնիվ, հուշարձանը, մասնավորապես պալատական սենյակները, Խալդի տաճարը եւ որոշ սենյակների պատեր, գնահատվում են որպես վտանգվածության բարձր աստիճան ունեցող կառույցներ:

«Էրեբունի-Երևան»-ի առաջին պաշտոնական տոնակատարությունն անց է կացվել 1968թ. հոկտեմբերին. նշվել է մայրաքաղաքի հիմնադրման 2750-րդ տարեդարձը, որի առթիվ տպագրված պլակատը նույնպես ցուցանում էր շարքում էր: Արվեստի գրականության եւ ոչ գրքային հրատարակությունների բաժնի ընթերցասրահում ներկայացված էին նաեւ մայրաքաղաքին նվիրված ուշագրավ ալբոմներ, բացիկներ, պլակատներ եւ այլն: